

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներին համապատասխան՝
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն**

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն	2
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը	6
2	Պատրաստման հիմունքները	6
3	Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ	7
4	Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ	25
5	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26
6	Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	26
7	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	30
8	Հարկային միջավայր	31
9	Վարկային կորստի գծով պահուստի հակադարձում	32
10	Այլ ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներ	32
11	Բանկերից ստացված վարկեր	33
12	Այլ փոխառություններ	33
13	Այլ ֆինանսական և ոչ ֆինանսական պարտավորություններ	34
14	Սեփական կապիտալ	34
15	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	34
16	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	35
17	Չուևտ տոկոսային եկամուտ	36
18	Միջնորդավճարների գծով եկամուտ, զուևտ	36
19	Այլ գործառնական եկամուտ	37
20	Այլ գործառնական ծախսեր	37
21	Այլ ընդհանուր վարչական ծախսեր	37
22	Ռիսկերի կառավարում	37
23	Իրական արժեքի չափում	47
24	Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն	50
25	Կապակցված կողմերի բացահայտումներ	50
26	Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ	51
27	Կապիտալի համարժեքություն	51
28	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	52

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ խորհրդին և բաժնետերերին:

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2022թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Ընկերության՝ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2022թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻՎ Վարքագիրը») սկզբունքների: Մենք կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԻՎ Վարքագրին համապատասխան:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Շնկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Շնկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Շնկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յուրմե՝

- որոշակիացնում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում,

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Լևան Կանկավա
Պատասխանատու աուդիտոր

Նինո Կադաղիձեի
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

29 հունիսի 2023թ.


Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան □	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	8,034	438,800
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	6	53,423,221	31,477,131
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	7	407,206	258,258
Այլ ակտիվներ	10	9,836,870	7,587,830
Հետաձգված հարկային ակտիվներ	8	-	91,722
Ընդամենը ակտիվներ		63,675,331	39,853,741
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերից ստացված վարկեր	11	36,830,286	17,901,221
Այլ փոխառություններ	12	14,399,109	10,921,113
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		271,488	114,369
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	18,621	-
Այլ պարտավորություններ	13	3,351,635	4,490,969
Ընդամենը պարտավորություններ		54,871,139	33,427,672
ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	3,847,439	3,847,439
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	15	59,891	55,433
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		138,824	-
Զբաղիված շահույթ		4,758,038	2,523,197
Ընդամենը սեփական կապիտալ		8,804,192	6,426,069
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		63,675,331	39,853,741

Հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է 2023թ. հունիսի 28-ին:

Աղասի Գալստյան
 Գլխավոր տնօրեն



Ժամեն Մինասյան
 Գլխավոր հաշվապահ

«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն

		2021թ.	
			(վերադասակարգված)
Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2022թ.	
Տոկոսային եկամուտ ֆինանսական վարձակալությունից	17	4,833,811	3,022,189
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	17	888,753	317,804
Տոկոսային ծախս	17	(2,498,499)	(1,304,367)
Չուտ տոկոսային եկամուտ		3,224,065	2,035,626
Վարկային կորստի գծով պահուստի հակադարձում	9	73,708	128,811
Չուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով պահուստից հետո		3,297,773	2,164,437
Միջնորդավճարների գծով եկամուտ	18	374,073	363,490
Միջնորդավճարների գծով ծախս	18	(181,057)	(160,659)
Չուտ վնաս արտարժույթով գործարքներից		(147,546)	(94,564)
Չուտ օգուտ արտարժույթային տարբերություններից		36,954	-
Այլ գործառնական եկամուտ	19	66,998	76,424
Ոչ տոկոսային եկամուտ		149,422	184,691
Անձնակազմի գծով ծախսեր		(383,720)	(375,638)
Այլ գործառնական ծախսեր	20	(117,712)	(67,283)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	21	(166,668)	(107,897)
Ոչ տոկոսային ծախսեր		(668,100)	(550,818)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		2,779,095	1,798,310
Շահութահարկի գծով ծախս	8	(544,254)	(337,412)
Հաշվետու տարվա շահույթ		2,234,841	1,460,898

«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

			2021թ.
Հազ. ԴՀ դրամ	Ծան.	2022թ.	(վերադասակարգված)
Հաշվետու տարվա շահույթ		2,234,841	1,460,898
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը ենթակա չէ վերադասակարգման հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում</i>			
Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում	7	169,297	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին առնչվող շահութահարկ	8	(30,473)	-
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ, որը ենթակա չէ վերադասակարգման հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում		138,824	-
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		2,373,665	1,460,898

«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Բաժնետիրական կապիտալ	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատումից ած	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
<i>Հազ. ՀՀ դրամ</i>					
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	3,847,439	55,433	-	2,523,197	6,426,069
Տարվա շահույթ				2,234,841	2,234,841
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	138,824	-	138,824
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	138,824	2,234,841	2,373,665
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծանոթագրություն 15)	-	4,458	-	-	4,458
Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,847,439	59,891	138,824	4,758,038	8,804,192

«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2022թ.	2021թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ֆինանսական վարձակալությունից ստացված տոկոսներ		4,958,149	3,070,110
Ստացված տոկոսներ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով		755,630	317,777
Վճարված տոկոսներ		(1,385,565)	(970,146)
Ստացված միջնորդավճարներ		374,073	498,058
Վճարված միջնորդավճարներ		(181,057)	(160,659)
Իրացված օգուտ հանած վնաս արտարժույթով գործարքներից		(147,546)	(94,564)
Վճարված այլ գործառնական ծախսեր		(110,715)	(67,283)
Ստացված այլ եկամուտներ		66,998	77,524
Աշխատավարձեր և այլ վճարումներ աշխատողներին		(382,051)	(305,369)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(235,450)	(72,862)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		3,712,466	2,292,586
<i>Գործառնական ակտիվների զուտ (աճ)/ նվազում</i>			
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(22,270,275)	(12,598,205)
Այլ ակտիվներ		(4,472,247)	(686,139)
<i>Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում).</i>			
Այլ պարտավորություններ		(1,843,732)	3,107,107
Գործառնական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը		(24,873,788)	(7,884,651)
Վճարված շահութահարկ		(307,265)	(223,319)
Գործառնական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(25,181,053)	(8,107,970)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում	7	(35,322)	(8,112)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(35,322)	(8,112)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բանկային վարկերից մուտքեր	26	73,239,445	42,931,789
Բանկային վարկերի մարում	26	(52,455,294)	(34,525,339)
Այլ փոխառություններից մուտքեր	26	7,986,448	3,256,117
Այլ փոխառությունների մարում	26	(3,977,026)	(3,171,656)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցներ		24,793,573	8,490,911
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(8,397)	17,414
Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը		433	(431)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում) / աճ		(430,766)	391,812
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		438,800	46,988
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	5	8,034	438,800

1 «ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ:

Ընկերության գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փ. 10:

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԿԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպության միակ բաժնետերեր է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ը՝ 100% (այսուհետ՝ «Բանկ»):

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն հանդիսանում է Ընկերության վերջնական վերահսկողը և բաժնետերեր:

2 Պատրաստման հիմունքները

Ընդհանուր դրույթներ. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտված դեպքերի: Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (հազ. ՀՀ դրամ), բացառությամբ մեկ բաժնետոմսի գծով գումարների, և եթե այլ բան նշված չէ:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. 2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների և պարենային ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության համար:

Ռուս-ուկրաինական հակամարտության սրման և Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառված պատժամիջոցների պատճառով 2022թ. առաջին եռամսյակի վերջում կանխատեսվում էր Ռուսաստանի տնտեսության տարեկան 10% անկում (ՏՀԳ -ի մարտի 2022-ի կանխատեսմամբ): Զանի որ Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ-ի ամենամեծ առևտրային գործընկերն է, և ՀՀ-ից ամենաշատ աշխատանքային միգրանտներ ընդունող երկիրը, ակնկալվում էր, որ Ռուսաստանի Դաշնության հոռետեսական տնտեսական զարգացումները բացասական ազդեցություն կունենան ՀՀ տնտեսության մի շարք ոլորտների, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից ստացված տրանսֆերտների վրա: Ելնելով վերոգրյալից՝ ակնկալվում էր, որ ՀՀ տնտեսության աճը կդանդաղի:

2 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

ՀՀ ԿԲ մարտի կանխատեսումների և ՏՀԳ-ի 2022թ. ապրիլյան կանխատեսումների համաձայն՝ ՀՀ տնտեսության տարեկան աճը կանխատեսվում էր մոտ 1%: 2022 թվականի առաջին եռամսյակի վերջում իր դեֆոլտի հավանականության կանխատեսումները և ԱՎԿ հաշվարկները պատրաստելիս Ընկերությունը հաշվի է առել վերը նշված դիտարկումներն ու ակնկալիքները:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է առկա համաշխարհային ցնցումներին և 2022թ. գրանցել է տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան տեղափոխման և տրանսֆերտների զգալի աճի շնորհիվ: Նշված բոլոր գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 12,6 տոկոս աճի 2022թ.-ին, ինչը զգալիորեն ավելի բարձր է, քան ակնկալվում էր տարեսկզբին: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կատարողական արդյունքների դիտարկման համաձայն՝ տնտեսական վերականգնումը կշարունակվի: Կառավարությունը նախատեսում է 7% աճ 2023 թվականին: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նախատեսում է զարգացնել արտահանմանն ուղղված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների ջանքերի միջոցով:

Standard & Poor's-ի կողմից Հայաստանին տրված վարկային վարկանիշը B+ է՝ 2022թ. նոյեմբերի 24-ի կայուն կանխատեսմամբ: Fitch-ի վարկային վարկանիշը Հայաստանի համար կազմում է B+ և թարմացվել է 2023թ. փետրվարի 10-ին՝ դրական կանխատեսմամբ:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Ընկերության գործառնությունների և ֆինանսական վիճակի վրա հայկական բիզնես միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա բիզնես միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Գնահատման անորոշություն. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հասանելի տեղեկատվության հիման վրա, Ընկերությունը ապագայում սպասվող դրամական հոսքերի գնահատումները արտացոլել է ակնկալվող վարկային կորուստների (Ծանոթագրություն 9) և հիմնական միջոցների իրական արժեքների վերագնահատումներում (Ծանոթագրություն 7):

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ. Ընկերությունն առաջին անգամ կիրառել է ստանդարտների որոշակի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի իրականացրել թողարկված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ ստանդարտի, մեկնաբանության կամ փոփոխության վաղաժամ կիրառում:

Մնցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից.

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՀՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՀՀՄՍ 1-ին, ՀՀՄՍ 9-ին, ՀՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

բնութագրերը գնահատելու միջոցով: Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները:

Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՀՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՀՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ. Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՀՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՀՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՀՀՄՄԽ (IFRIC)21-ին, , այլ ոչ թե 2018թ. Հայեցակարգային հիմունքին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՀՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հօգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:

Փոփոխություններ են կատարվել ՀՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալության խթանների դասակարգման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

ՀՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՀՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեն մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՀՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՀՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՀՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՀՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՀՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՀՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո գեղջված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՀՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. Սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍ-ի կողմից որոշվելից ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՀՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը:

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՀՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2021թ. մարտի 31-ին և ուժի մեջ է 2021թ. ապրիլի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

2020թ. մայիսին կատարվեց ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը, որը վարձակալներին տրամադրում էր հայեցողական հնարավորություն՝ գնահատելու, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձավճարների գծով արտոնությունները, որոնք 2021թ. հունիսի 30-ի դրությամբ կամ մինչ այդ ամսաթիվը հանգեցնում են վարձակալության վճարների նվազեցման, հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: 2021թ. մարտի 31-ին հրապարակված փոփոխությամբ երկարաձգվեց գործնական նպատակահարմարության ժամկետը 2021թ. հունիսի 30-ից մինչև 2022թ. հունիսի 30:

Փոփոխությունների կիրառումը Էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Թողարկված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Հրապարակվել են 2023թ. Հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

ՀՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ17-ը փոխարինում է ՀՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս Էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ: ՀՀՄՍ17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարողացել են ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովվում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, Ընկերությունը անմիջապես ճանաչում է վնաս:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. Հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17-ի ութ ոլորտներին, և դրանք նախատեսված չեն ստանդարտի հիմնարար սկզբունքները փոխելու համար: ՖՀՄՍ 17-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* Կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. Վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ: Այլ փոփոխություններ. Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի, ընտրված անցումային արտոնություններ և այլ աննշան փոփոխություններ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Եական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Եական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի Եական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ Եական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են Եական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ Եական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են Եական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ Եական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության Եական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՀՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Եականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ Եականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ:

Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

ՖՅՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՅՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՖՅՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՅՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Փոփոխությունը վերաբերում է միայն ապահովագրողների կողմից ՖՅՄՍ 17-ին անցմանը և չի ազդում ՖՅՄՍ 17 -ի որևէ այլ պահանջի վրա: ՖՅՄՍ 17-ի և ՖՅՄՍ 9-ի անցումային պահանջները կիրառվում են տարբեր ամսաթվերով, և կհանգեցնեն դասակարգման հետևյալ միանգամյա տարբերություններին ՖՅՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ ներկայացված համեմատական տեղեկատվության մեջ. հաշվապահական հաշվառման անհամապատասխանություններ ապահովագրական պայմանագրի գծով ընթացիկ արժեքով չափվող պարտավորությունների և ամորտիզացված արժեքով չափվող որևէ հարակից ֆինանսական ակտիվների միջև, և եթե կազմակերպությունը որոշում է վերաներկայացնել ՖՅՄՍ 9-ի նպատակներով համեմատական տեղեկատվությունը, ապա՝ դասակարգման տարբերություններ համեմատական ժամանակաշրջանում ապաճանաչված ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՅՄՍ 9-ը չի կիրառվում) և այլ ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՅՄՍ 9-ը կիրառվում է) միջև: Փոփոխությունը կօգնի ապահովագրողներին խուսափել այդ ժամանակավոր հաշվապահական անհամապատասխանություններից և, հետևաբար, կբարելավի համեմատական տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Դա տեղի է ունենում ապահովագրողներին ֆինանսական ակտիվների վերաբերյալ համեմատական տեղեկատվության ներկայացման տարբերակների հնարավորություն տրամադրելու միջոցով: ՖՅՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ կազմակերպություններին, համեմատական տեղեկատվության ներկայացման առումով թույլատրվում է կիրառել դասակարգման ծածկույթ այն ֆինանսական ակտիվի նկատմամբ, որի համար կազմակերպությունը չի վերաներկայացնում ՖՅՄՍ 9-ի նպատակով համեմատական տեղեկատվությունը: Անցումային տարբերակը հասանելի կլինի գործիք առ գործիք՝ թույլ տալով կազմակերպությանը ներկայացնել համեմատական տեղեկատվությունն այնպես, ինչպես եթե ՖՅՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջները կիրառվեին այդ ֆինանսական ակտիվի նկատմամբ, բայց չպահանջելով, որ կազմակերպությունը կիրառի ՖՅՄՍ 9-ի արժեզրկման պահանջները. և ֆինանսական ակտիվի նկատմամբ դասակարգման ծածկույթը կիրառող կազմակերպությունից կպահանջվի օգտագործել անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը՝ որոշելու, թե ինչպես է կազմակերպությունն ակնկալում դասակարգել այդ ֆինանսական ակտիվը ՖՅՄՍ 9 կիրառմամբ:

Փոփոխություններ ՖՅՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՅՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՖՅՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարում

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա:

Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտավորության ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Իրական արժեքի չափում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով հաշվառվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները իրական արժեքով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 23-ում:

Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի չափումը հիմնված է այն ենթադրության վրա, որ ակտիվը վաճառելու կամ պարտավորությունը փոխանցելու գործարքը տեղի է ունենում:

- ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում. կամ
- Հիմնական շուկայի բացակայության դեպքում ակտիվի կամ պարտավորության համար առավել բարենպաստ շուկայում:

Հիմնական կամ առավել բարենպաստ շուկան պետք է հասանելի լինի Ընկերությանը: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ օգտագործելով այն ենթադրությունները, որոնք շուկայի մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց տնտեսական լավագույն շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ընկերությունն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք համապատասխանում են հանգամանքներին, և որոնց վերաբերյալ առկա են բավարար տվյալներ իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնս օգտագործելով համապատասխան դիտարկելի տվյալների օգտագործումը և նվազագույնի հասցնելով չդիտարկվող տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ – գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ – գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Ընկերությունը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչումը

Ճանաչման ամսաթիվը

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը պարտավորվում է ձեռք բերել ակտիվ կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափումը

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ

Ընկերությունը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերությունն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ընկերությունը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորվածություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերում տեղաբաշխված միջոցներ և ամորտիզացված արժեքով այլ ֆինանսական գործիքներ

Ընկերությունը չափում է Բանկերում տեղաբաշխված միջոցները և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով.
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

Բիզնես մոդելի գնահատում

Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերության բիզնես մոդելը գնահատվում է ոչ թե գործիք առ գործիք, այլ համախմբված՝ պորտֆելի մակարդակով, հիմնվելով դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են.

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Ընկերության գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն սցենար» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Ընկերության սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Ընկերությունը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

SPPI գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Վարկային պայմանագրի մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Ընկերությունը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ

Ընկերությունը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Ընկերությունը է ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Ընկերության պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիա, և ակնկալվող վարկային կորուստների պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Ընկերությունը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Ֆինանսական վարձակալության համար ստացված և տրված կանխավճարներ

Ընկերությունը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում

Ընկերությունը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են դրամական միջոցներից և կարճաժամկետ ավանդներից, որոնք մարվում են ծազման օրվանից ինսուտն օրվա ընթացքում և գերծ են պայմանագրային սահմանափակումներից:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

(i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Փոխառություններ

Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ փոխառությունները ապաճանաչվում են, ինչպես նաև ամորտիզացիայի գործընթացում:

Եթե Ընկերությունը գնում է իր սեփական պարտքը, այն հանվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ և ֆինանսական վարձակալությունից ստացված եկամտի ճանաչումը

Վարձակալության սկիզբը վարձակալության համաձայնագրի ամսաթվից և կողմերի՝ վարձակալության հիմնական դրույթների կատարման հանձնառության ստանձնման ամսաթվից ամենավաղն է: Այդ ամսաթվին՝

- վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, և
- Որոշվում են վարձակալության ժամկետի մեկնարկին ճանաչվելիք գումարները:

Վարձակալության ժամկետի մեկնարկն այն ամսաթիվն է, որից սկսած վարձակալն իրավասու է իրագործել վարձակալված ակտիվն օգտագործելու իր իրավունքը: Դա վարձակալության սկզբնապես ճանաչման ամսաթիվն է (այսինքն՝ վարձակալությունից բխող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների կամ ծախսերի ճանաչումն է համապատասխան դեպքում):

Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Ընկերությունը ճանաչում է վարձակալությունում գուտ ներդրումների գումարը, որը նվազագույն վարձավճարների գծով ստացվելիք գումարն է՝ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով գեղչված: Համախառն ներդրումների և դրանց ներկա արժեքի տարբերությունը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալությունից չվաստակած եկամուտ:

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է այնպիսի գրաֆիկի վրա, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի գուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Վերանայված վարձակալություն

Հնարավորության դեպքում Ընկերությունը ձգտում է վերակազմակերպել վարձակալությունները, այլ ոչ թե բռնազանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարձակալության պայմանագրի կնքման միջոցով:

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարձակալությունը, երբ պայմաններն այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարձակալություն, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեքը կորուստ է հասնում դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարձակալությունները ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարձակալությունը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեքի վրա (POCI): Երբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարձակալությունը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- Վարձակալության արժույթի փոփոխությունը,
- Վարձակալության գործընկերոջ փոփոխությունը,
- Եթե փոփոխությունն այնպիսին է, որ գործիքն այլևս չի բավարարում SPPI չափանիշին:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (EIR) գեղջված դրամական հոսքերի փոփոխությունը, Ընկերությունը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով (EIR), այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Ընկերությունը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ ակտիվը փոփոխության արդյունքում դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է տեղափոխվի 3-րդ փուլում: Որպեսզի վերակազմավորված վարձակալությունը վերադասակարգվի 3-րդ փուլից, պետք է բավարարվեն ստորև նշված պայմանները.

- Ամսական վճարումների գրաֆիկով վարձակալությունների դեպքում, ժամկետանց գումարները ամբողջությամբ վճարվել են, մայր գումարի և տոկոսների 3 անընդմեջ վճարումներ կատարվել են՝ փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:
- Ճկուն վճարման գրաֆիկով վարձակալությունների դեպքում, ժամկետանց գումարներ ամբողջությամբ վճարվել են, այնուհետև մայր գումարի և տոկոսների հերթական վճարումները կատարվել են նվազագույնը 6 ամիս փորձաշրջանի համար՝ փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, անհրաժեշտության դեպքում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- Ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը սպառվել է:
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Ընկերության մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ընկերության և նրա սկզբնական փոխատուների միջև էապես տարբեր պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը, ինչպես նաև առկա ֆինանսական պարտավորությունների պայմանների էական փոփոխությունները հաշվառվում են որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Պայմանները էապես տարբերվում են, եթե նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքը ներառյալ վճարված վճարները՝ առանց ստացված և գեղչված վճարների՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, առնվազն 10%-ով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի գեղչված ներկա արժեքից:

Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճանաչվում են շահույթ կամ վնաս մարումից: Եթե փոխանակումը կամ փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

Պարտավորությունների փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում մարման, հաշվառվում են որպես գնահատման փոփոխություն՝ օգտագործելով կուտակային փոխհատուցման մեթոդը, ցանկացած օգուտ կամ վնաս ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվեկշռային արժեքների տարբերության տնտեսական Էությունը վերագրվում է սեփականատերերի հետ կապիտալ բնույթի գործարքի:

Հարկային միջավայր

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուղվի, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալվում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վստահությունները և արտոնությունները: Ը: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերություններ:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեքը: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեքի վերադարձման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի:

Սկզբնական արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու կուտակված արժեքը: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Հիմնական միջոցների միավորի նկատմամբ սեփական կապիտալում ներառված վերագնահատումից աճն ուղղակիորեն փոխանցվում է չբաշխված շահույթին, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ակտիվի մաշվածության հաշվարկումը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար մատչելի է դառնում: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Շենքեր	50
Կահույք և կցամասեր	10
Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	5
Տրանսպորտային միջոցներ	8
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրեր և լիցենզիաներ:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ 7-10 տարի օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են ոչ նյութական ակտիվի արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ

Դրանք հաշվեգրվում են, երբ Ընկերությունն, անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավաբանորեն ամրագրված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող ռեսուրսների արտահոսք, ինչպես նաև պարտավորության չափը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ հայեցողական շահաբաժիններով բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Ընկերություն, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը:

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս

Ընկերությունը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Ընկերության կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Ընկերությունը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Ընկերությունը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

Եթե Փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվի գծով վարկային ռիսկը հետագայում բարելավվի այնպես, որ ակտիվն այլևս վարկային արժեզրկված չլինի, և բարելավումը հնարավոր լինի օբյեկտիվորեն վերագրել իրադարձության, որը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ակտիվը սահմանվել է որպես վարկային արժեզրկված (այսինքն ակտիվը դառնում է վերականգնման ենթակա), ակտիվը վերադասակարգվում է 3-րդ փուլից և տոկոսային հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով EIR-ը համախառն հաշվեկշռային արժեքի վրա: Լրացուցիչ տոկոսային եկամուտը, որը նախկինում շահույթում և վնասում չէր ճանաչվել՝ ելնելով ակտիվի Փուլ 3 բնույթից, սակայն որը ներկայումս ակնկալվում է ստանալ ակտիվի վերականգնումից հետո, ճանաչվում է որպես արժեզրկման հակադարձում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային հասույթը ճանաչվում է՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը, և ներկայացվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային հասույթ» տողում:

Հաճախորդներին տրված վարկերի գծով տույժերից ստացված տոկոսային հասույթը, որը ներկայացված է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում «Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային հասույթ» տողում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Միջնորդավճարների գծով եկամուտ

Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից Ընկերությունը ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի կատարողական պարտավորությունների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո: Երբ պայմանագրով նախատեսված է փոփոխական փոխհատուցում, միջնորդավճարների գծով եկամուտը ճանաչվում է միայն այն չափով, որքանով որ հավանական է, որ ճանաչված կուտակային եկամտի զգալի մասի հակադարձում տեղի չի ունենա, մինչև հետագայում լուծվի փոփոխական փոխհատուցման հետ կապված անորոշությունը:

Արտարժույթի վերահաշվարկ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Ընկերության գործառնական ու հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի օրվա միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտներ/(վնասներ)» արտարժույթի վերագնահատում» հոդվածում: Ոչ դրամական հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամական հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերությունը ներառվում է «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտներ/(վնասներ)» արտարժույթով կատարված գործարքի գծով» հոդվածում: ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքները 2022թ. դեկտեմբերի 31-ին և 2021թ. դեկտեմբերի 31-ին կազմել են համապատասխանաբար 393.57 ՀՀ դրամ և 480.14 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար, և 420.06 դրամ և 522.59 դրամ 1 եվրոյի համար:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

Ընկերության աշխատակիցները (ներառյալ ավագ ղեկավարները) վարձատրություն են ստանում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով, այսպիսով աշխատակիցները ծառայություններ են մատուցում բաժնային գործիքների դիմաց (բաժնետոմսով մարվող գործարքներ) վարձատրության նկատառումով:

Բաժնետոմսով մարված գործարքներ

Բաժնետոմսով մարվող գործարքների արժեքը որոշվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ պարգևատրումը տրամադրվում է համապատասխան գնահատման մոդելի կիրառմամբ, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 15-ում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Այդ ծախսը ճանաչվում է անձնակազմի ծախսերում՝ սեփական կապիտալի համապատասխան աճի հետ միասին այն ժամանակաշրջանի ընթացքում, որում ծառայությունը մատուցվել է և անհրաժեշտության դեպքում, կատարողականի պայմանները կատարվել են (տրամադրման ժամանակաշրջանում): Ընդհանուր ծախսը ճանաչվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին որպես սեփական կապիտալով մարվող գործարքներ մինչ իրավունքի առաջացման ամսաթիվը արտացոլում է իրավունքի ստացման ժամկետի երկարաձգումը, ինչը Ընկերության լավագույն գնահատականն է բաժնային գործիքների քանակի վերաբերյալ, որոնք, ի վերջո, կապահովվեն: Ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մասին հաշվետվության ծախսը կամ մուտք արված գումարը ներկայացնում է այդ ժամանակաշրջանի սկզբում և վերջում ճանաչված կուտակային ծախսի շարժը:

Սպասարկման և ոչ շուկայական կատարողականի պայմանները հաշվի չեն առնվում իրավունքի ստացման ամսաթվին իրական արժեքը որոշելիս, սակայն պայմանների բավարարման հավանականությունը գնահատվում է որպես Ընկերության լավագույն գնահատականի մաս, այն բաժնային գործիքների քանակի որոշման ժամանակ, որոնք ի վերջո կհատկացվեն: Շուկայական գործունեության պայմաններն արտացոլվում են շնորհման ամսաթվի իրական արժեքում: Շնորհումների հետ կապված ցանկացած այլ պայմաններ, որոնք ներառված չեն ծառայության պահանջներում, համարվում են չներառվող պայմաններ: Չներառվող պայմաններն արտացոլվում են շնորհումի իրական արժեքում և հանգեցնում են պարզևի անհապաղ ծախսմանը, եթե չկան նաև սպասարկման և/կամ կատարման պայմաններ:

Ծախս չի ճանաչվում այն շնորհումների համար, որոնք, ի վերջո, չեն հատկացվում, քանի որ շուկայական կատարողականը և/կամ սպասարկման պայմանները չեն պահպանվել: Այն դեպքում, երբ պարզևները ներառում են շուկայական կամ ոչ իրավունք առաջացող պայման, գործարքները համարվում են կատարված՝ անկախ նրանից, թե շուկայական կամ իրավունքի առաջացման պայմանը բավարարված է, պայմանով, որ կատարման և/կամ սպասարկման մյուս պայմանները բավարարված են:

Երբ բաժնետոմսով մարված շնորհման պայմանները փոփոխվում են, ճանաչված նվազագույն ծախսը չփոփոխված շնորհման ամսաթվի իրական արժեքն է, պայմանով, որ պահպանվում են մրցանակի բաշխման սկզբնական պայմանները: Լրացուցիչ ծախսը, որը չափվում է փոփոխման ամսաթվի դրությամբ, ճանաչվում է ցանկացած փոփոխության համար, որը մեծացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքի ընդհանուր գումարի իրական արժեքը կամ այլ կերպ ձեռնտու է աշխատողին: Եթե մրցանակը չեղարկվում է կազմակերպության կամ կոնտրագենտի կողմից, մրցանակի իրական արժեքի ցանկացած մնացած տարր ճանաչվում է ծախս անմիջապես շահույթի կամ վնասի միջոցով:

Հաշվետվությունում ներկայացման փոփոխություններ

Տարվա ընթացքում Ընկերությունը փոխել է տոկոսային եկամուտների ներկայացումը Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում միացնելով այլ տոկոսային եկամուտներ և արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ տողերը որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ տողին: Ընկերությունը կարծում է, որ այս փոփոխությունը ապահովում է առավել հուսալի և ճշգրիտ տեղեկատվություն: Վերաներկայացման նպատակով ազդեցությունը հետևյալն է եղել 31 դեկտեմբերի 2021թ.-ի դրությամբ:

Հազ ԳԳ դրամ	Սկզբնապես ներկայացված	Վերադասակարգում	2021թ. դեկտեմբերի 31-ի վերադասակարգված
			աճ
Այլ տոկոսային եկամուտ	317,500	(317,500)	-
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	304	317,500	317,804

4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ

Դատողություններ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները, բացառությամբ գնահատումների, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա.

Գնահատումներում անորոշություններ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում ղեկավարությունը օգտագործել է իր դատողությունները և կատարել գնահատումներ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Առավել էական են հանդիսացել հետևյալ դատողությունները և գնահատումները.

Հողի, շենքերի և ավտոտրանսպորտային միջոցների վերագնահատում (Ծանոթագրություն 7)

Գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա՝ էապես ճշգրտված՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Ընկերությունը ներգրավում է անկախ փորձագետների՝ իր տարածքների և տրանսպորտային միջոցների գնահատման համար:

Իրական արժեքի չափում

Եթե ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները չեն կարող ստացվել ակտիվ շուկաներից, դրանք որոշվում են գնահատման մի շարք մեթոդներով՝ մաթեմատիկական մոդելների կիրառմամբ: Այս մոդելների տվյալները վերցվում են դիտարկելի շուկաներից, եթե դա հնարավոր է, իսկ երբ դա հնարավոր չէ, իրական արժեքները սահմանելու համար անհրաժեշտ է դատողությունների որոշակի աստիճան: Լրացուցիչ մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ

Ֆինանսական ակտիվների բոլոր կատեգորիաներում արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես, ապագա դրամական հոսքերի և գրավի արժեքների գումարի և ժամկետների գնահատում արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճի գնահատականը որոշելիս: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել տարբեր մակարդակների պահուստների: Բացի այդ, գործունեության լայնածավալ խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար: Ընկերության ԱՎԿ-ի հաշվարկները բարդ մոդելների գործածման արդյունք են՝ հիմքում ընկած՝ փոփոխական ելակետային տվյալների ընտրության և դրանց փոխկախվածության հետ կապված մի շարք ենթադրություններով: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են.

- Կոլլեկտիվ հիմունքներով PD-ների, EAD-ների և LGD-ների գնահատման վիճակագրական մոդելներ.
- Ֆինանսական ակտիվների սեզմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ը գնահատվում է կոլլեկտիվ հիմունքներով.
- ԱՎԿ-ի մոդելների ձևավորումը, ներառյալ՝ բազմաթիվ բանաձևերի և մուլտիպլիկատիվ տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսական տվյալների (օրինակ՝ գործազրկության մակարդակը, գրավի արժեքը) առնչության որոշումը և դրանց ազդեցությունը PD-ի, EAD-ի և LGD-ի վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրություն և նրանց հավանականությունների կշիռների որոշում գնահատելու տնտեսական ելակետային տվյալները ԱՎԿ մոդելների համար:

2022թ. դեկտեմբերի 31-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման գծով պահուստը կազմել է 543,325 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 655,278 հազ. ՀՀ դրամ): Առավել մանրամասն՝ Ծանոթագրություն 6-ում:

5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հաշիվներ այլ բանկերում	8,034	439,233
Արժեզրկում	-	(433)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,034	438,800

Դրամական միջոցների համարժեքների բոլոր մնացորդները բաշխվում են 1-ին փուլին: Ստորև ներկայացված է տարվա ընթացքում ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	433	2
Փոփոխություններ ԱՎԿ-ում	(433)	431
Առ 31 դեկտեմբերի	-	433

ԱՎԿ նախորդ տարվա հաշվեկշիռը դրամական միջոցների և դրանց համարժեքների 2022թ. դեկտեմբերի 31-ի հաշվեկշիռում հակադարձվել է:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 22-ում:

6 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ֆինանսական վարձակալություն կորպորատիվ հաճախորդներին	47,807,779	27,328,408
Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին	6,158,767	4,559,937
Համախառն ֆինանսական վարձակալություն	53,966,546	31,888,345
Արժեզրկման գծով պահուստ	(543,325)	(655,278)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	53,423,221	31,233,067

Ընկերությունը վարձակալություններ է տվել ֆիզիկական անձանց, փոքր և միջին ձեռնարկություններին, տնտեսության տարբեր ոլորտներում գործող գյուղացիական տնտեսություններին՝ սարքավորումներ և արտադրական ռեսուրսներ ձեռք բերելու համար:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները ներառում են ֆինանսական վարձակալության պայմանագրերի շրջանակներում ձեռքբերված, բայց ճանապարհին գտնվող սարքավորումներ 601,995 հազ. ՀՀ դրամի չափով (2021թ.՝ 274,249 հազ. ՀՀ դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	29,985,478	1,278,736	624,131	31,888,345
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	35,908,638	-	-	35,908,638
Մարված ակտիվներ	(11,604,537)	(543,588)	(493,109)	(12,641,234)
Տեղափոխումներ Փուլ 1	651,401	(651,401)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(1,064,355)	1,098,742	(34,387)	-
Տեղափոխումներ Փուլ 3	(154,357)	(340,380)	494,737	-
Արտաթույլի փոխարժեքի ճշգրտումներ	(1,128,216)	(51,544)	(8,648)	(1,188,408)
Դուրսգրում	-	-	(795)	(795)
31 դեկտեմբերի 2022թ.	52,594,052	790,565	581,929	53,966,546

6 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	213,741	32,171	409,366	655,278
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	73,514	-	-	73,514
Մարված ակտիվներ	(17,962)	(2,663)	(70,504)	(91,129)
Տեղափոխումներ Փուլ 1	13,758	(13,758)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(16,282)	40,655	(24,373)	-
Տեղափոխումներ Փուլ 3	(6,453)	(7,375)	13,828	-
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(11,064)	(17,878)	123,885	94,943
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(1,894)	(2,343)	(190,726)	(194,963)
Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	33,617	(3,362)	(147,890)	(117,635)
Ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա չազդող փոփոխություններ.				
Չեղչի հակադարձում (ճանաչված տոկոսային հասույթում)	-	-	21,070	21,070
Դուրսգրում	-	-	(794)	(794)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(6,739)	(1,098)	(6,757)	(14,594)
31 դեկտեմբերի 2022թ.	240,619	27,711	274,995	543,325

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	22,486,327	2,654,184	766,369	25,906,880
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	17,622,878	-	-	17,622,878
Մարված ակտիվներ	(8,750,018)	(1,441,615)	(294,720)	(10,486,353)
Տեղափոխումներ Փուլ 1	537,625	(537,625)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(721,528)	805,601	(84,073)	-
Տեղափոխումներ Փուլ 3	(189,429)	(129,685)	319,114	-
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(1,000,377)	(72,124)	(31,826)	(1,104,327)
Վերականգնում	-	-	98,678	98,678
Դուրսգրում	-	-	(149,411)	(149,411)
31 դեկտեմբերի 2021թ.	29,985,478	1,278,736	624,131	31,888,345

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2021թ.	163,473	71,137	654,876	889,486
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	142,645	-	-	142,645
Մարված ակտիվներ	(36,493)	(11,194)	(147,476)	(195,163)
Տեղափոխումներ Փուլ 1	30,263	(30,263)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(4,833)	119,975	(115,142)	-
Տեղափոխումներ Փուլ 3	(18,381)	6,002	12,379	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(26,324)	(105,747)	238,791	106,720
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(29,322)	(16,013)	(157,114)	(202,449)

Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	57,555	(37,240)	(168,562)	(148,247)
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա չազդող փոփոխություններ.				
Վերականգնում	-	-	98,678	98,678
Դուրսգրում	-	-	(149,411)	(149,411)
Արտաթույլի փոխարժեքի ճշգրտումներ	(7,287)	(1,726)	(26,215)	(35,228)
31 դեկտեմբերի 2021թ.	213,741	32,171	409,366	655,278

Գրավադրված ակտիվներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները 15,888,376 հազ. ՀՀ դրամ համախառն արժեքով (2021 թ.՝ 6,959,933 հազ. ՀՀ դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառու միջոցների համար (տես Ծանոթագրություն 11):

Բռնագանձված ակտիվներ

Ժամանակաշրջանի ընթացքում բռնագանձված և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահվող ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 30,795 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 30,795 հազ. ՀՀ դրամ):

Ֆինանսական վարձակալության պորտֆելի ճյուղային և աշխարհագրական վերլուծություն

Կորպորատիվ հաճախորդների գծով ֆինանսական վարձակալությունը հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդների գծով է, որոնք գործում են հետևյալ տնտեսական ոլորտներում.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Շինարարություն	12,799,029	5,218,432
Սննդի և խմիչքի արտադրություն	8,441,952	4,823,923
Գյուղատնտեսություն	7,585,991	4,616,771
Առևտուր	6,404,628	4,198,963
Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին	6,158,767	4,559,937
Ծառայությունները	5,123,983	3,445,727
Արտադրություն	4,623,227	2,852,638
Տրանսպորտ	2,027,441	1,217,883
Կաշվե իրերի արտադրություն	173,284	32,321
Ավիափոխադրումներ	149,466	350,490
Հիդրոէլեկտրակայաններ	142,381	279,495
Այլ	336,397	291,765
Արժեզրկման գծով պահուստ	(543,325)	(655,278)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	53,423,221	31,233,067

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է վարձակալության համախառն և զուտ ներդրումների մարման ժամկետը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազ. ՀՀ դրամ	Մինչև 1 տարի	1 - 2 տարի	2- 3 տարի	3 -4 տարի	4 - 5 տարի	Ավելի քան 5 տարի
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	18,688,857	18,279,144	14,662,938	10,057,619	4,857,855	1,230,283
Չվաստակաճ ապագա ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալությունից	(5,362,090)	(4,172,926)	(2,558,453)	(1,237,650)	(379,336)	(99,695)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	13,326,767	14,106,218	12,104,485	8,819,969	4,478,519	1,130,588
Մինչև պահուստը	13,326,767	14,106,218	12,104,485	8,819,969	4,478,519	1,130,588

6 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է վարձակալության համախառն և զուտ ներդրումների մարման ժամկետը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Մինչև 1 տարի	1 - 2 տարի	2- 3 տարի	3 -4 տարի	4 - 5 տարի	Ավելի քան 5 տարի
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	12,445,124	10,280,780	7,551,901	5,135,507	3,013,621	879,724
Հվաստակած ապագա ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալությունից	(2,880,320)	(2,241,545)	(1,374,308)	(664,821)	(203,766)	(53,553)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում մինչև պահուստը	9,564,804	8,039,235	6,177,593	4,470,686	2,809,855	826,171

7 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցների, օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և ոչ նյութական ակտիվների տեղաշարժերը հետևյալն են.

	Հոդ և շենքեր	Համակարգչային սարքավորումներ	Հարմարանքներ և կցամասեր	Ավտոտրանսպորտային միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
Սկզբնական արժեք կամ վերագնահատված գումար						
1 հունվարի 2021թ.	401,949	59,382	59,897	27,260	5,758	554,246
Ավելացումներ	-	8,112	-	-	-	8,112
31 դեկտեմբերի 2021թ.	401,949	67,494	59,897	27,260	5,758	562,358
Ավելացումներ	-	5,910	7,567	16,917	4,928	35,322
Օտարումներ	(11,003)	(16,427)	(10,883)	-	(288)	(38,601)
Վերագնահատման ազդեցությունը						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում*	162,752	-	-	6,545	-	169,297
Վերագնահատման ազդեցությունը՝ զուտ կուտակված մաշվածությամբ	(200,366)	-	-	(22,122)	-	(222,488)
31 դեկտեմբերի 2022թ.	353,332	56,977	56,581	28,600	10,398	505,888
Կուտակված մաշվածություն						
1 հունվարի 2021թ.	171,174	31,459	52,404	14,601	288	269,926
Մաշվածության գումարը	15,031	13,359	2,738	3,046	-	34,174
31 դեկտեմբերի 2021թ.	186,205	44,818	55,142	17,647	288	304,100
Մաշվածության գումարը	14,161	4,458	8,791	4,475	237	32,122
Օտարումներ և դուրսգրումներ	-	(3,915)	(10,849)	-	(288)	(15,052)
Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա	(200,366)	-	-	(22,122)	-	(222,488)
31 դեկտեմբերի 2022թ.	-	45,361	53,084	-	237	96,682
Զուտ հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2022թ.	353,332	11,616	3,497	28,600	10,161	407,206
31 դեկտեմբերի 2021թ.	215,744	22,676	4,755	9,613	5,470	258,258
1 հունվարի 2021թ.	230,775	27,923	7,493	12,659	5,470	284,320

* Դրական վերագնահատման հիմնական պատճառը անշարժ գույքի իրական արժեքների զգալի աճն է:

7 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ (շարունակություն)

Ընկերությունը ներգրավել է անկախ գնահատող իր հողերի, շենքերի և տրանսպորտային միջոցների իրական արժեքը որոշելու համար: Իրական արժեքը որոշվում է շուկայական ապացույցների հիման վրա:

Վերագնահատման ամսաթիվը 2022թ. դեկտեմբերի 1-ն էր: Շենքերի իրական արժեքի մասին մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցները ներառում էին ամբողջությամբ մաշված ակտիվներ՝ 78,716 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 53,138 հազար):

8 Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	(464,384)	(261,698)
Հետաձգված հարկի ծախս	(79,870)	(75,714)
Շահութահարկի գծով ծախս	(544,254)	(337,412)

2022թ. ընթացիկ և հետաձգված հարկերի համար կիրառելի հարկային դրույքաչափը 18% է (2021թ.՝ 18%): Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Շահույթ նախքան հարկումը	2,779,095	1,798,310
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափը	18%	18%
Շահութահարկի գծով ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով	500,237	323,696
(Չհարկվող եկամուտ)/Չնվազեցվող ծախսեր, գույք	44,017	13,716
Շահութահարկի գծով ծախս	544,254	337,412

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված և 2021թ. ընթացքում ժամանակավոր տարբերությունների շարժերը ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.	Ճանաչված շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում	Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	341	(341)	-	-
Բանկերից ստացված վարկեր	14,473	(14,473)	-	-
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	61,522	(52,968)	-	8,554
Հիմնական միջոցներ	-	-	(30,473)	(30,473)
Այլ փոխառություններ	7,004	(7,004)	-	-
Այլ պարտավորություններ	6,056	(2,758)	-	3,298
Այլ ակտիվներ	2,326	(2,326)	-	-
Ընդամենը	91,722	(79,870)	(30,473)	(18,621)

Հազ. ՀՀ դրամ	Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.	Ճանաչված շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում	Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	263	78	341
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	7,399	7,074	14,473
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	143,265	(81,743)	61,522
Այլ փոխառություններ	7,004	-	7,004
Այլ պարտավորություններ	4,448	1,608	6,056
Այլ ակտիվներ	5,057	(2,731)	2,326
Ընդամենը	167,436	(75,714)	91,722

8 Հարկում (շարունակություն)

Ճանաչված Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հետաձգված հարկային ակտիվներ	-	91,722
Հետաձգված հարկային պարտավորություններ	(18,621)	-

9 Վարկային կորստի գծով պահուստի հակադարձում

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ հատկացումները.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	ՓՈԸ	Ընդամենը
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	6	(33,617)	3,362	147,890	-	117,635
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	433	-	-	-	433
Այլ ֆինանսական ակտիվներ	10	(47,880)	-	3,520	-	(44,360)
Ընդամենը վարկային կորստի գծով պահուստի հակադարձում		(81,064)	3,362	151,410	-	73,708

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վարկային կորստի ծախսերի հակադարձումը հիմնականում պայմանավորված է դրական մակրոտնտեսական ակնկալիքներով:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ հատկացումները.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	(431)	-	-	(431)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	6	(50,506)	132,954	65,799	148,247
Այլ ֆինանսական ակտիվներ	10	(28,244)	-	9,239	(19,005)
Ընդամենը վարկային կորուստների գծով ծախս		(79,181)	132,954	75,038	128,811

10 Այլ ակտիվներ

Այլ ակտիվները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Այլ դեբիտորական պարտքեր	355,078	203,210
Արժեզրկման գծով պահուստ	(26,281)	(21,313)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	328,797	181,897
Վարձակալված գույքի մատակարարներին վճարվող կանխավճարներ	8,062,460	6,857,303
Հարկային կանխավճարներ	941,521	405,162
Վարձակալության ենթակա գույք	464,625	99,995
Վերադարձված վարձակալական գույք	30,795	30,795
Այլ	8,672	12,678
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	9,508,073	7,405,933
Ընդամենը այլ ակտիվներ	9,836,870	7,587,830

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	21,313	-	21,313
Ստեղծված կամ վերականգնված նոր ակտիվներ (զուտ)	47,880	-	47,880
Տեղափոխումներ Փուլ 3	(11,005)	11,005	-
Ժամանակահատվածի ընթացքում փոփոխվող փոխանցված բացահայտումների ազդեցությունը	-	(3,520)	(3,520)
Ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	-	(39,392)	(39,392)
Դուրսգրում	-	-	-
31 դեկտեմբերի 2022թ.	58,188	(31,907)	26,281

10 Այլ ակտիվներ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2021թ.	14,708	-	14,708
Ստեղծված կամ վերականգնված նոր ակտիվներ (գուտ)	28,244	-	28,244
Տեղափոխումներ Փուլ 3	(21,639)	21,639	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը	-	(9,239)	(9,239)
Ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա Պուրագրում	-	(12,400)	(12,400)
31 դեկտեմբերի 2021թ.	21,313	-	21,313

11 Բանկերից ստացված վարկեր

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 36,830,286 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 17,901,221 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով վարկերը մայր ընկերությունից են: Այս վարկերի ընդհանուր մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

12 Այլ փոխառություններ

Այլ փոխառու միջոցների կազմը.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Փոխառություններ Հայաստանի կառավարությունից	11,150,448	6,612,293
Փոխառություններ տեղական ֆինանսական հաստատություններից	2,085,362	-
Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	1,163,299	4,308,820
Այլ փոխառություններ	14,399,109	10,921,113

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից փոխառությունները ներառում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով փոխառություններ մի քանի ֆինանսավորման ծրագրերով, որոնք ենթակա են մարման 2022-ից մինչև 2028 թթ.:

ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունները հիմնականում ներառում են ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման ծրագրերով տրամադրված ՀՀ դրամով փոխառությունները՝ որոնք ենթակա են մարման 2022-2041 թվականների ընթացքում:

Տեղական ֆինանսական հաստատություններից ստացված փոխառությունները ներառում են հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրերով դրամային փոխառություններ՝ որոնք ենթակա են մարման 2022-ից մինչև 2034 թվականը:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 15,888,376 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 6,959,933 հազ. ՀՀ դրամ) համախառն արժեքով ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերը ծառայում են որպես գրավ ՀՀ կառավարությունից և Հայաստանի ֆինանսական հաստատություններից ապահովված փոխառությունների համար (տես Ծանոթագրություն 11 և 12):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի այլ փոխառու միջոցներ երեք գործընկերներից (2021թ.՝ հինգ գործընկերներից), որոնց գծով մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 13,846,206 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 10,621,355 հազ. ՀՀ դրամ):

Պայմանագրային դրույթների խախտում

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել է ֆինանսական հաստատության հետ կնքված վարկային պայմանագրերով նախատեսված մեկ դրույթ: Վարկային պայմանագրի պայմաններում չկան փոխադարձ դեֆոլտի դրույթներ: Պայմանագրերի խախտմամբ փոխառու միջոցների գումարը՝ 1,145,153 հազ.ՀՀ դրամ ներկայացվել է որպես մեկ տարվա ընթացքում մարման ենթակա՝ ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծության մեջ (Ծանոթագրություն 24): Խախտման համար տույժեր չեն կիրառվել և վարկավորման պայմանների վերանայում չի եղել: Հաշվետու ամսաթվից հետո Ընկերությունը գործընկերոջից արտոնություն է ստացել խախտման ռիսկերի գծով և Ընկերությունը գտնվում է բանակցությունների մեջ գործընկերոջ

հետ՝ պայմանագրային փոփոխությունների մասով, որոնց արդյունքում պայմանագրային դրույթները պետք է փոփոխվեն:

Ընկերությունը պահպանել է բոլոր պայմանագրային դրույթները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

13 Այլ պարտավորություններ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2022թ.	2021թ.
Կրեդիտորական պարտքեր	286,096	373,414
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	73,423	75,092
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	359,519	448,506
Կանխավճարներ վարձակալներից	2,982,241	3,959,353
Շահութահարկից բացի այլ հարկային պարտավորություններ	9,875	5,544
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	-	77,566
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	2,992,116	4,042,463
Ընդամենը այլ պարտավորություններ	3,351,635	4,490,969

14 Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմել է 3,847,439 հազ. դրամ (2021թ.՝ 3,847,439 հազ. դրամ): Հայտարարված, թողարկված և շրջանառվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 200 սովորական բաժնետոմսերից (2021թ.՝ 200 սովորական բաժնետոմսեր), որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 19,237,197 ՀՀ դրամ: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել Ընկերության ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Ընկերության առավելագույն չբաշխված շահույթի չափով: 2022թ. Ընթացքում Ընկերության կողմից շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել (2021թ.՝ շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել):

Պահուստների բնույթը և նպատակը

Հողի, շենքերի և փոխադրամիջների վերազնահատումից աճ

Հողի, շենքերի և փոխադրամիջների վերազնահատումից աճը ներառում է մինչև հողի, շենքերի և փոխադրամիջոցների ապաճանաչումը կամ արժեզրկումը դրանց կուտակային դրական վերազնահատված արժեքը:

15 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

«ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիր

2021թ. հունիսին «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ն, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն հայտարարեցին «ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի մեկնարկի մասին (այսուհետ՝ Ծրագիր)՝ որպես «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի առանցքային և հավատարիմ աշխատակիցների վարձատրման, պարգևատրման, առաջխաղացման, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս:

Ծրագրի շրջանակներում «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ն «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի աշխատակիցներին կնվիրաբերի Բանկի մինչև 300,000 (երեք հարյուր հազար) սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

15 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (շարունակություն)

2021թ. հունիսին Ընկերության աշխատակիցներն ստացան Բանկի 3,300 սովորական բաժնետոմս «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ից՝ տրամադրման ամսաթվի դրությամբ յուրաքանչյուրը 12,591 ՀՀ դրամ իրական արժեքով, անվճար և առանց որևէ պայմանի:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստը կազմել է 59,891 հազ. դրամ (2021թ.՝ 55,433 հազ. դրամ): Ընկերության աշխատակիցներին տրամադրված բաժնետոմսերը՝ ընդամենը 4,458 հազ. ՀՀ դրամ իրական արժեքով, ճանաչվել են որպես անձնակազմի գծով ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և որպես լրացուցիչ կապիտալ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սեփական կապիտալի փոփոխությունների հաշվետվությունում (2021թ.՝ 55,433 հազ. դրամ):

Ընկերությունը ներգրավել է անկախ խորհրդատուի բաժնետոմսերի իրական արժեքը գնահատելու համար: Բաժնետոմսերի գնահատման համար օգտագործվել է շահաբաժինների գեղջման մեթոդը, որ ներառում է.

- Ֆինանսական մոդելի ընդհանուր ենթադրությունների և կառուցվածքի որոշում.
- Բանկի և Նրա դուստր ձեռնարկությունների հաշվեկշռի կանխատեսում.
- Բանկի և Նրա դուստր ձեռնարկությունների ֆինանսական արդյունքի կանխատեսում.
- Շահաբաժինների կանխատեսում՝ հաշվի առնելով կապիտալի համարժեքության և իրացվելիության պահանջները.
- Չեղչի դրույքաչափի որոշում;
- Բանկի մնացորդային արժեքի որոշում.
- Ֆինանսական արդյունքների կանխատեսման մեջ չներառված ակտիվների և պարտավորությունների վերլուծություն.
- Բանկի սեփական կապիտալի 100%-ի հաշվարկ:

Չեղջման դրույքը որոշվել է համանման բանկի բաժնային գործիքներից պահանջվող եկամտաբերության դրույքի հիման վրա:

16 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Գործառնական միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը կարծում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ աջակցելու Ընկերության բիզնեսի կայունությանը ներկա պայմաններում:

Իրավական միջավայր

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են հարուցվել դատական հայցեր և պահանջներ: Ղեկավարության համոզմամբ նման հայցերի և պահանջների արդյունքում ծագող հնարավոր պարտավորությունները (առկայության դեպքում) Էական բացասական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

Հարկային միջավայր

ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: արկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տուկոսային վճարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տուգանքների գծով պարտավորություններ չեն կարող առաջադրվել, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

16 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկլարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե պետական մարմինները հաջողությամբ իրականացնեն իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տրամադրվելիք ֆինանսական վարձակալություն – պայմանագրային գումար	12,099,005	10,780,707

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունն ամբողջությամբ ապահովագրված չէ իր գրասենյակի և սարքավորումների վնասներից, գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեությանը վերաբերող պատահարներից: Զանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

17 Չուտ տոկոսային եկամուտ

Չուտ տոկոսային եկամուտը ներառում է.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ֆինանսական վարձակալությունից ստացված տոկոսային եկամուտներ	4,833,811	3,022,189
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	888,753	317,804
Ընդամենը տոկոսային եկամուտ	5,722,564	3,339,993
Տոկոսային ծախս		
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	(2,498,275)	(1,304,367)
Այլ	(224)	-
Տոկոսային ծախս	(2,498,499)	(1,304,367)
Չուտ տոկոսային եկամուտ	3,224,065	2,035,626

18 Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ

Չուտ միջնորդավճարները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Միջնորդավճարներ՝ որպես ապահովագրական գործակալ հանդես գալու գծով	225,424	135,168
Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից	148,649	228,322
Միջնորդավճարների գծով եկամուտ	374,073	363,490
Միջնորդավճարների գծով ծախս	(181,057)	(160,659)
Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ	193,016	202,831

19 Այլ գործառնական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Այլ եկամուտ	66,998	16,899
Եկամուտ դրամաշնորհներից	-	31,454
Հաշվարկված տույժեր և տուգանքներ	-	28,071
Ընդամենը այլ եկամուտ	66,998	76,424

20 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Շահութահարկից բացի այլ հարկեր	76,179	59,256
Ապահովագրություն	32,564	6,557
Տույժեր և տուգանքներ	79	170
Վնաս այլ ակտիվների օտարումից	-	656
Այլ	8,890	644
Այլ գործառնական ծախսեր	117,712	67,283

21 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ներկայացուցչական ծախսեր	55,218	2,126
Մաշվածություն և ամորտիզացիա	32,122	34,174
Ֆինանսական համակարգի հաշտարարի վճարումներ	25,567	19,610
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	17,538	7,542
Վերանորոգում և սպասարկում	10,695	10,004
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ	7,033	-
Մասնագիտական ծառայություններ	-	7,471
Ճամփորդական ծախսեր	516	20
Այլ	17,979	26,950
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	166,668	107,897

22 Ռիսկերի կառավարում

Ներածություն

Ռիսկը բնորոշ է Ընկերության գործունեությանը, սակայն այն կառավարվում է ռիսկերի շարունակական հայտնաբերման, չափման և մոնիթորինգի գործընթացների միջոցով, որոնք ենթակա են ռիսկերի սահմանաչափերին և մշտական վերահսկողության: Ռիսկերի կառավարման այս գործընթացը առանցքային է Ընկերության եկամտաբերության հաստատուն մակարդակի պահպանման համար, և Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների շրջանակում ի հայտ եկող ռիսկերի համար: Ընկերությունը ենթարկվում է վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերի, որոնք իրենց հերթին բաժանվում են առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Ընկերությունը ենթակա է նաև գործառնական ռիսկերի:

Բիզնեսի ռիսկերը, ինչպիսիք են շրջակա միջավայրի, տեխնոլոգիական և ոլորտային փոփոխությունները, նույնպես ներառված են ռիսկերի կառավարման գործառնական շրջանակներում՝ համապատասխան տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ:

Ռիսկերի կառավարման կառուցվածքը

Ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը, սակայն առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի ռազմավարության մշակման և իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականության և սահմանաչափերի մշակման համար: Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

Ռիսկերի գերկենտրոնացում

Ռիսկի համակենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործունեության ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը նմանապես է արձագանքում տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների համեմատական զգայունությունն այն պայմանների նկատմամբ, որոնք ազդում են որոշակի ոլորտի կամ աշխարհագրական տարածաշրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով Ընկերության քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրահատուկ սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով դիվերսիֆիկացված պորտֆելի ապահովմանը: Վարկային ռիսկերի հայտնաբերված համակենտրոնացումները համապատասխանաբար վերահսկվում և կառավարվում են :

Վարկային ռիսկ

Արժեզրկման գնահատում

Ընկերությունը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, գեղջված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

PD	Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
EAD	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
LGD	Դեֆոլտի դեպքում կորստի չափը դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Այն հիմնված է պայմանագրային հիմունքով վճարման ենթակա դրամական միջոցների և վարկատուի կողմից ստացման ակնկալվող, ներառյալ գրավի միջոցով՝ դրամական միջոցների միջև տարբերության վրա: Այն սովորաբար արտահայտվում է որպես EAD-ի տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային կորուստ կամ ԱՎԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային կորուստի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ն ԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱՎԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերությունը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ելնելով վերը նշված գործընթացից՝ Ընկերությունն իր վարկերը խմբավորում է Փուլ 1, Փուլ 2, Փուլ 3 և POCI, ինչպես նկարագրված է ստորև:

- Փուլ 1. Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
- Փուլ 2. Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Ընկերությունը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
- Փուլ 3. Վարկերը համարվում են արժեզրկված:
POCI. Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ, և հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 91 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը: Ընկերությունը բանկերում տեղաբաշխված գումարները համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսները և/կամ հիմնական գումարը ավելի քան 15 աշխատանքային օր:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը,
- վերանայման կարգավիճակը,
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:
- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացումը այլ անձանց, ներառյալ կենտրոնացումը ընտանիքի անդամների շրջանում վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարվելը և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայությունը. Այս չափանիշը վերաբերվում է բոլոր վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը.
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Ընկերությունը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով դեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, Ընկերությունը ուշադիր դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

Ընկերության քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՈՆԱ (SICR) չափանիշների առկայությունից:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատված շեղումը փաստացի միտումներից, հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ ուղղված են երեք PD PIT անցումային մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% հավանականություններով՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին համապատասխան:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Ընկերությունը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամսվա հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը

Ընկերությունը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով:

Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկի զգալի աճ

Ընկերությունը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ընկերության կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Ընկերությունը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

Ընկերության ղեկավարությունը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.

- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը.

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱԿԿ մոդելներում Ընկերությունը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

2022թ.

Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.

- Սպառողական գների գնաճ.
- Ներմուծման տարեկան աճ.
- Ծառայությունների տարեկան աճ.
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջին
- Գյուղատնտեսական արտադրություն տարեկան աճ:
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.
- M2 դրամական պաշարների աճ.

2021թ.

- ՀՆԱ տարեկան աճ.
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- Սպառողական գների գնաճ.
- Ապրանքների արտահանման ծավալ.
- Ապրանքների ներմուծման ծավալ.
- Ծառայությունների տարեկան աճ.
- Ընդհանուր բանկային վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում;
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ

Ընկերությունը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ և Համաշխարհային բանկի տվյալների բազա, ինչպես նաև ՀՀ կառավարության կանխատեսումներ): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

Աղյուսակները ցույց են տալիս 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԿԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի ցուցանիշներ	Ավելացնար	Վերագրված հավանականություն, %	2023թ.	2024թ.	2025թ.
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.92%	9.01%	7.81%
	Ելակետային	70%	5.70%	5.90%	5.20%
	Հոռետեսական	15%	1.48%	2.79%	2.59%
Սպառողական գների գնաճ, % (cum)	Լավատեսական	15%	1.60%	1.29%	1.02%
	Ելակետային	70%	3.90%	4.00%	4.00%
	Հոռետեսական	15%	6.20%	6.71%	6.98%
Ներմուծման տարեկան աճ, %	Լավատեսական	15%	5.56%	7.51%	8.40%
	Ելակետային	70%	1.80%	3.30%	3.90%
	Հոռետեսական	15%	-1.96%	-0.91%	-0.60%
Ծառայությունների տարեկան աճ, %	Լավատեսական	15%	7.76%	8.11%	8.50%
	Ելակետային	70%	4.00%	3.90%	4.00%
	Հոռետեսական	15%	0.24%	-0.31%	-0.50%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	427.12	407.58	383.29
	Ելակետային	70%	446.30	447.60	443.70
	Հոռետեսական	15%	465.48	489.49	510.13
Գյուղատնտեսական արտադրություն տարեկան աճ, %	Լավատեսական	15%	8.36%	8.61%	8.70%
	Ելակետային	70%	1.40%	1.80%	2.70%
	Հոռետեսական	15%	0.84%	0.19%	-0.30%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ (-) / ավելցուկ (+), մլն. ՀՀ դրամ	Լավատեսական	15%	(116,679)	(78,440)	(17,090)
	Ելակետային	70%	(292,200)	(273,300)	(225,567)
	Հոռետեսական	15%	(467,721)	(468,160)	(434,043)
M2 դրամական պաշարների աճ, %	Լավատեսական	15%	18.73%	13.28%	13.43%
	Ելակետային	70%	14.90%	9.20%	9.20%
	Հոռետեսական	15%	11.07%	5.12%	4.97%

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Աղյուսակները ցույց են տալիս 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԿԼ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

Հիմնական ցուցանիշներ	ԱԿԼ սցենար	Վերագրված հավանականություն, %	2022թ.	2023թ.	2024թ.
ՀՆԱ տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.20%	8.13%	8.70%
	Ելակետային	70%	5.30%	4.00%	4.40%
	Հոռետեսական	15%	1.40%	-0.13%	0.10%
Արդյունաբերական արտադրություն տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.37%	7.50%	7.67%
	Ելակետային	70%	5.50%	3.40%	3.40%
	Հոռետեսական	15%	1.63%	-0.70%	-0.87%
Սպառողական գների գնաճ, % (cum)	Լավատեսական	15%	2.89%	1.82%	0.90%
	Ելակետային	70%	5.50%	4.70%	4.00%
	Հոռետեսական	15%	8.11%	7.58%	7.10%
Ապրանքների արտահանման ծավալը, հազ.ԱՄՆ դոլար	Լավատեսական	15%	3,805,178	4,422,900	4,522,087
	Ելակետային	70%	3,548,750	3,846,845	3,648,115
	Հոռետեսական	15%	3,292,322	3,310,965	2,894,623
Ապրանքների ներմուծման ծավալ, հազ. ԱՄՆ դոլար	Լավատեսական	15%	6,496,801	7,630,110	8,253,480
	Ելակետային	70%	5,918,000	6,326,000	6,190,000
	Հոռետեսական	15%	5,339,199	5,144,016	4,502,578
Ծառայությունների տարեկան աճ, %	Լավատեսական	15%	8.51%	10.57%	11.31%
	Ելակետային	70%	4.90%	5.20%	5.90%
	Հոռետեսական	15%	1.29%	-0.17%	0.13%
Ընդհանուր բանկային վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, %	Լավատեսական	15%	61.59%	65.70%	71.76%
	Ելակետային	70%	60.05%	62.48%	64.55%
	Հոռետեսական	15%	57.52%	56.50%	54.68%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	457.72	441.20	424.26
	Ելակետային	70%	476.44	479.84	483.74
	Հոռետեսական	15%	495.16	520.10	548.53

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Ընկերության կողմից՝ հիմնվելով արտաքին վարկանիշների վրա: Չվարկանշված ազդեցությունները դասակարգվում են Ստանդարտ դասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արժեզրկված չեն:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց զուտ վարկերի և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի վերաբերյալ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2022թ. Հազ. ՀՀ դրամ	Ծան.		Ստանդարտ Դաս	Ենթա- ստանդարտ դաս	Արժե- զրկված	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5		8,034	-	-	8,034
Ֆինանսական	6	Փուլ 1	52,353,433	-	-	52,353,433
վարձակալության գծով ստացվելիք գումարներ		Փուլ 2	-	762,854	-	762,854
Այլ ֆինանսական ակտիվներ	10	Փուլ 3	-	-	306,934	306,934
			328,797	-	-	328,797
Ընդամենը			52,690,264	762,854	306,934	53,760,052

2021թ. Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Փուլեր	Ստանդարտ դաս	Ենթա- ստանդարտ դաս	Արժե- զրկված	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	Փուլ 1	438,800	-	-	438,800
Ֆինանսական	6	Փուլ 1	30,015,801	-	-	30,015,801
վարձակալության գծով ստացվելիք գումարներ		Փուլ 2	-	1,246,565	-	1,246,565
Այլ ֆինանսական ակտիվներ	10	Փուլ 3	-	-	214,765	214,765
		Փուլ 1	181,897	-	-	181,897
Ընդամենը			30,636,498	1,246,565	214,765	32,097,828

Ստորև բերված աղյուսակները ներկայացնում են հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի միջին PD-ները՝ ըստ ելակետային սցենարի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2022թ.	Դաս	Միջին PD
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ Ենթաստանդարտ Արժեզրկված	1.3% 6.7% 100.0%

2021թ.	Դաս	Միջին PD
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ Ենթաստանդարտ Արժեզրկված	0.76% 4.74% 100%

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի կարողանա սահմանված ժամկետներում կատարել իր վճարային պարտավորությունները՝ բնականոն և անկանխատեսելի պայմաններում:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերերից, բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու նպատակով:

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը ըստ պայմանագրային մարման ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղչված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցայահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Ընկերությունը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Ընկերությունը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Ընկերության կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	4-12 ամիս	1- 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Պարտավորություններ						
Բանկերից ստացված վարկեր	-	871,158	2,389,412	28,836,250	4,973,545	37,070,365
Այլ փոխառություններ	1,424,740	584,045	5,272,415	14,587,463	1,428,558	23,297,221
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	359,519	-	-	-	359,519
Ընդամենը չգեղչված ֆինանսական պարտավորություններ	1,424,740	1,814,722	7,661,827	43,423,713	6,402,103	60,727,105

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	4-12 ամիս	1- 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Պարտավորություններ						
Բանկերից ստացված վարկեր	-	626,392	2,372,912	15,250,068	-	18,249,372
Այլ փոխառություններ	247,690	161,293	3,286,535	8,550,138	79,534	12,325,190
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	448,506	-	-	-	448,506
Ընդամենը չգեղչված ֆինանսական պարտավորություններ	247,690	1,236,191	5,659,447	23,800,206	79,534	31,023,068

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Շահույթի կամ վնասի մասին հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լրացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ:

22 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր: Զանի որ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մնացորդ, զգայունություն չի հաշվարկվել:

	Ելակետերի աճ 2021թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.
Տիպ LIBOR	1.25%	743
	Ելակետերի նվազում 2021թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.
Տիպ LIBOR	(0.25)%	(149)

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է Տնօրինությունը սահմանել է արտարժույթային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի Էական արժույթային դիրքեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա, երբ այլ փոփոխական արժեքները հաստատուն են (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը: Տնօրինությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ:

Արժույթ	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2022թ.	Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա 2022թ.	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2021թ.	Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա 2021թ.
ԱՄՆ դոլար	5.00%	10,656	5.00%	(13,573)
ԱՄՆ դոլար	(5.00)%	(10,656)	(5.00)%	13,573
Եվրո	8.50%	11,691	8.50%	(6,962)
Եվրո	(8.50)%	(11,691)	(8.50)%	6,962
ՌԴ ռուբլի	5.00%	67	-	-
ՌԴ ռուբլի	5.00%	(67)	-	-

Ընկերության աշխարհագրական համակենտրոնացումը համարվում է նվազագույն, քանի որ այն գործում է բացառապես մեկ երկրում և ակտիվների և պարտավորությունների մեծ մասը կենտրոնացված են մեկ երկրում :

23 Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց

Ընկերության ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են հողը և շենքերը, փոխադրամիջոցները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Դեկավարությունը Ընկերության անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա

Ընկերությունն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու համար:

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն իրական արժեքի գնահատման համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի բացահայտման նպատակով Ընկերությունը որոշել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվի կամ պարտավորության բնույթի, բնութագրերի և ռիսկերի և իրական արժեքի հիերարխիայի մակարդակի վրա, ինչպես նկարագրված է վերևում:

Հազ. ՀՀ դրամ	Իրական արժեքի չափում՝ օգտագործելով		
	Գնանշումներ ակտիվ շուկաներում (Մակարդակ 1)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)	Ընդամենը
31 դեկտեմբերի 2022թ.			
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,034	-	8,034
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	53,423,221	53,423,221
Այլ ֆինանսական ակտիվներ	-	328,797	328,797
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է			
Բանկերից ստացված վարկեր	-	36,830,286	36,830,286
Այլ փոխառություններ	-	14,399,109	14,399,109
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	359,519	359,519

23 Իրական արժեքի չափում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Իրական արժեքի չափում՝ օգտագործելով		
	Գնանշումներ ակտիվ շուկաներում (Մակարդակ 1)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)	Ընդամենը
31 դեկտեմբերի 2021թ.			
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	438,800	-	438,800
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	31,477,131	31,477,131
Այլ ֆինանսական ակտիվներ	-	181,897	181,897
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է			
Բանկերից ստացված վարկեր	-	17,934,842	17,934,842
Այլ փոխառություններ	-	10,941,823	10,941,823
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	448,506	448,506

Իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ստորև բերված է Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների համեմատությունն ըստ դասերի, որոնք իրական արժեքով չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները:

Հազ. ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Զճանաչված օգուտ/ (վնաս)	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Զճանաչված օգուտ/ (վնաս)
	2022թ.			2021թ.		
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,034	8,034	-	438,800	438,800	-
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	53,423,221	53,423,221	-	31,477,131	31,477,131	-
Այլ ֆինանսական ակտիվներ	328,797	328,797	-	181,897	181,897	-
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերից ստացված վարկեր	36,830,286	36,830,286	-	17,901,221	17,934,842	(33,621)
Այլ փոխառություններ	14,399,109	14,399,109	-	10,921,113	10,941,823	(20,710)
Այլ ֆինանսական պարտավորություններ	359,519	359,519	-	448,506	448,506	-
Ընդամենը իրական արժեքի չճանաչված փոփոխություն	-	-	-	-	-	(54,331)

Գնահատման մեթոդաբանություն և ենթադրություններ

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

23 Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Բարձր իրացվելի կամ կարճաժամկետ մարման ժամկետով (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցայսհանգ ավանդների և անժամկետ ինսայդական հաշիվների նկատմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Գույքի իրական արժեքը որոշվել է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա՝ Էապես ճշգրտված՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Այդ ակտիվների իրական արժեքները գնահատվում են անկախ, մասնագիտական որակավորում ունեցող և անհրաժեշտ լիցենզիաների տիրապետող՝ գույքի գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալից ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ սերտ խորհրդակցությամբ: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ստորև:

Հող և շենքեր

Գրասենյակի հողերի և շենքերի իրական արժեքները գնահատվում են եկամտի և շուկայական մոտեցումներով: Եկամտի մոտեցումը կիրառվել է վարձակալությունից ստացված եկամտի գնահատված հոսքի կապիտալացմամբ՝ առանց կանխատեսվող գործառնական ծախսերի, օգտագործելով շուկայական եկամտաբերությունից բխող զեղչման դրույքաչափը, որը ենթադրվում է նմանատիպ անշարժ գույքի գծով վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարը Էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարներից, ճշգրտումներ են կատարվում վարձակալության գնահատված արժեքի նկատմամբ: Վարձակալված գույքից դրամական միջոցների ներհոսքը գնահատելիս հաշվի է առնվում զբաղվածության ներկա մակարդակը, առկա վարձակալության պայմանները և ապագա վարձակալություններից վարձակալական վճարների ակնկալիքները շենքերի տնտեսական մնացորդային տևողության ընթացքում:

Առավել նշանակալի ելակետային տվյալները, որոնցից որևէ մեկը դիտարկելի չէ, վարձակալության գնահատված արժեքն է, թափուրության մակարդակի և զեղչի դրույքաչափի վերաբերյալ ենթադրությունները: Գնահատված իրական արժեքը մեծանում է, եթե գնահատված վարձակալությունը մեծանում է, թափուրության մակարդակը նվազում է կամ եթե զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների նկատմամբ: Ղեկավարությունը համարում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների շրջանակը ամենամեծն է վարձակալության արժեքների և թափուրության մակարդակների համար, և որ կա նաև փոխկապակցվածություն այս տվյալների միջև:

Շուկայական մոտեցումն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջին շուկայական գործարքների դիտարկելի գները և ներառում է գույքին բնորոշ գործակիցներով ճշգրտումներ՝ ներառյալ չափը, գտնվելու վայրը, շենքի շինարարական-ինժեներական առանձնահատկությունները, տեխնիկական (ֆիզիկական) վիճակը, ծանրաբեռնվածությունը և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներից է՝ ճշգրտումը գույքին բնորոշ գործակիցներով: Այս ճշգրտման չափն ու ուղղությունը կախված է նմանատիպ գույքի դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որոնք օգտագործվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած այս ելակետային տվյալները սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր առմամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները Էական ազդեցություն չեն ունենա գնահատման վրա:

24 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերականգնման կամ մարման ժամկետների:

Տե՛ս Ծանոթագրություն 22 Ռիսկերի կառավարում Ընկերության պայմանագրային չգեղջկած մարման պարտավորությունների համար:

	2022թ.			2021թ.		
	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,034	-	8,034	438,800	-	438,800
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13,192,596	40,230,625	53,423,221	13,828,363	17,648,768	31,477,131
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	407,206	407,206	-	258,258	258,258
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	91,722	91,722
Այլ ակտիվներ	9,836,870	-	9,836,870	7,587,830	-	7,587,830
Ընդամենը	23,037,500	40,637,831	63,675,331	21,854,993	17,998,748	39,853,741

	2022թ.			2021թ.		
	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
Բանկերից ստացված վարկեր	2,888,262	33,942,024	36,830,286	2,875,986	15,025,235	17,901,221
Այլ փոխառություններ	4,648,776	9,750,333	14,399,109	3,202,761	7,718,352	10,921,113
Ընթացիկ հարկային պարտավորություն	271,488	-	271,488	114,369	-	114,369
Այլ պարտավորություններ	3,351,635	-	3,351,635	4,490,969	-	4,490,969
Ընդամենը	11,160,161	43,692,357	54,852,518	10,684,085	22,743,587	33,427,672
Զուտ	11,877,339	(3,054,526)	8,822,813	11,170,908	(4,744,839)	6,426,069

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց լուծարումը պատմականորեն տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները վերը նշված աղյուսակներում ներառված են Մինչև մեկ տարի սյունակում:

25 Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՍՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չեն իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

25 Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	2021թ.	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,853	0,02%	438,800	1.30%
Պարտավորություններ				
Բանկերից ստացված վարկեր	36,830,286	7.05%	17,901,221	5.79%

Կապակցված կողմերի գործարքներից առաջացող եկամուտներն ու ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային եկամուտ	38	304
Տոկոսային ծախս	1,720,487	659,475
Կոմիսիոն ծախս	177,141	158,007

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը հետևյալն է

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	115,780	99,941

26 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Բանկերից ստացված վարկեր	Այլ փոխառություններ	Ընդամենը պարտավորություններ ֆինանսավորման գործունեությունից
Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.				
Թողարկումից մուտքեր		42,931,789	3,256,117	46,187,906
Մարում		(34,525,339)	(3,171,656)	(37,696,995)
Արտարժույթի վերահաշվարկ		(1,092,167)	(459,117)	(1,551,284)
Այլ		304,799	12,325	317,124
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	11, 12	17,901,221	10,921,113	28,822,334
Թողարկումից մուտքեր		73,239,445	7,986,448	81,225,893
Մարում		(52,455,294)	(3,977,026)	(56,432,320)
Արտարժույթի վերահաշվարկ		(2,942,262)	(557,184)	(3,499,446)
Այլ		1,087,176	25,758	1,112,934
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	11, 12	36,830,286	14,399,109	51,229,395

«Այլ» տողը ներառում է այլ փոխառու միջոցների և բանկերից ստացված վարկերի դիմաց կուտակված, բայց դեռևս չվճարված տոկոսների ազդեցությունը: Ընկերությունը դասակարգում է վճարված տոկոսագումարները որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

27 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով:

Նախորդ տարվա ընթացքում Ընկերությունը լիովին բավարարել է կապիտալի նկատմամբ կիրառվող բոլոր արտաքին պահանջները:

27 Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Ընկերության կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ Կենտրոնական Բանկը սահմանում և վերահսկում է Ընկերության կապիտալի նկատմամբ պահանջները:

Ընկերությունը որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ վարկային Ընկերությունների համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ ներկայիս պահանջների համաձայն, վարկային ընկերությունները, որոնք իրականացնում են ֆինանսական վարձակալության գործառնություններ, պետք է ապահովեն 100,000 հազ. ՀՀ դրամի չափով նվազագույն ընդհանուր կապիտալ: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը բավարարում է նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջները:

ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված Կապիտալի համարժեքության նորմատիվ

ԿԲ-ն պահանջում է ֆինանսական լիզինգ իրականացնող վարկային կազմակերպություններից պահպանել կապիտալի համարժեքության գործակիցը ռիսկով կշռված ակտիվների 8%-ի չափով: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կապիտալի համարժեքության գործակիցը հետևյալն է.

	2022թ. (աուդիտ չանցած)	2021թ. (աուդիտ չանցած)
<i>Հազ. ՀՀ դրամ</i>		
1-ին դասի կապիտալ	8,592,404	6,627,707
Ընդամենը կապիտալ	8,592,404	6,627,707
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	47,144,311	47,144,311
Ընդամենը կապիտալ՝ արտահայտված որպես ռիսկով կշռված ակտիվների տոկոս (ընդհանուր կապիտալի ցուցանիշ)	18.23%	14.06%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

28 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո և սույն հաշվետվության ամսաթվից հետո որևէ Էական իրադարձություն տեղի չի ունեցել, որը ենթակա է բացահայտման այս հաշվետվության մեջ: